ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2015թ. հոկտեմբերի 12 թիվ 115-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով , Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակ քաղաքի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 9-ի գրությունը **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության խորհուրդների կազմը հաստատելու մասին>> թիվ 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) <<Աշտարակ քաղաքի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<Սամվել Շուխյան>> և <<Սերոբ Սարգսյան>> բառերը փոխարինել համապատասխանաբար <<Հեղինե Ղազարյան>> և <<Քրիստինե Հակոբյան>> բառերով:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ